# ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ

## Շինարարություն, բարեկարգում

Իրականացվել են.

- բակերի ասֆալտապատում՝ 47.400 քմ,
- փողոցների ընթացիկ վերանորոգում՝ 36.300 քմ,
- եզրաքարերի վերանորոգում՝ 150 գծմ,
- եզրաքարերի տեղադրում՝ 1.670 գծմ ,
- պուրակների սալիկապատում՝ 965 քմ:







## Բնակֆոնդի պահպանում

Վերանորոգվել են.

- 1 921 քմ թեք տանիք,
- 10305.5 քմ հարթ տանիք,
- 56 շքամուտք (բոլոր հարկերը)՝

Երևանի քաղաքապետարանի և համատիրությունների հետ համագործակցության արդյունքում,

- 28 պատշգամբ՝ 27 բնակարաններում:







# Կանաչապատում

- Վերանորոգվել է 1010 գծմ երկարությամբ ոռոգման ցանց :
- Տնկվել են 11715 ծառ, մոտ 800 թուփ և 1000 հատ վարդի թուփ:
- Էտվել է 1000 ծառ:















# Բակային տարածքների բարեկարգում

- Բարեկարգվել է 6 բակային տարածք,
- Յուրի Բախշյանի անվան այգին (9962 քմ ընդհանուր մակերեսով),
- տեղադրվել են 68 համալիր մանկական խաղեր, մարզասարքեր և զրուցատաղավարներ,
- վերակառուցվել են 2 անցուղիների աստիճաններ,
- կառուցվել է արհեստական խոտածածկույթով մեկ ֆուտբոլի դաշտ, վերանորոգվել 7-ը,
- տեղադրվել է արտաքին լուսավորության 108 հենասյուն,
- նկարազարդվել է  846 քմ բակային տարածք,
- նորոգվել և նորով է փոխարինվել թեքված և վթարային 18 հենասյուն:











## Համագործակցություն «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Երևան Ջուր», «Երևան գազ» ՓԲԸ-ների հետ

Վերակառուցվել է Ախպարաշեն թաղամասի 30 կմ ջրագիծը՝ 1700 բաժանորդի համար (ԾԻԳ):







# Սոցիալական ոլորտ

- Վարչական շրջանում կառուցվել է 41 թեքահարթակ:
- Բանակի օրվա կապակցությամբ ՀՀ զինված ուժերում միաժամանակ ծառայող երկու և ավելի եղբայրների 27 ծնողների տրամադրվել է դրամական խրախուսանք:
- 199 ծնողներ այցելել են ԼՂՀ և ՀՀ սահմանամերձ գոտիներում ծառայող իրենց զավակներին:





## Համագործակցություն ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ

Տարբեր սոցիալական ծրագրեր են իրականացվել Երկրապահ կամավորականների միության, «Առաքելություն Հայաստան», «Կամրջակ», «Թուֆենկյան հիմնադրամ», «Խուլերի միավորում», «Հանս Քրիստիան Կոֆոեդ» ՀԿ-ների և «Ալեքսանյանների ընտանիք» բարեգործական հիմնադրամի հետ: «Ալեքսանյանների ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից (ի դեմս Սամվել Ալեքսանյանի) վարչական շրջանում իրականացվել են 10.230.000 դրամի բարեգործական տարբեր ծրագրեր:



**Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին.**

- Ամանորի առթիվ 4000 ընտանիք ստացել է սննդի փաթեթ:
- Սուրբ Զատկի կապակցությամբ վարչական շրջանի սոցիալապես անապահով 3500 ընտանիքի տրամադրվել է պարենային օգնություն:
- Վարչական շրջանի 125 երեխա ամառային հանգիստն անցկացրել է առողջարարական ճամբարներում:
- «Գիտելիքի միջազգային օրվա» կապակցությամբ 1-4 րդ դասարանների սոցիալապես անապահով 400 երեխայի տրամադրվել են գրենական պիտույքների փաթեթներ:
- Վարչական շրջանում բնակվող սիրիահայ 24 ընտանիք ստացել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա և դրամական աջակցություն:
- «Էրեբունի-Երևան 2797» տոնակատարության շրջանակներում սոցիալապես անապահով 276 ընտանիքի տրամադրվել է կենցաղային տեխնիկա:
- Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ 43 տարեցների տրամադրվել է դրամական օգնություն, 6 տարեցների՝ պարենային փաթեթ:
- Երևանի թիվ 1 տուն-ինտերնատին նվիրաբերվել է 50 աթոռ:
- Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70-ամյակի կապակցությամբ հիմնանորոգվել է գրասենյակ, 28 մասնակիցների տրամադրվել է դրամական աջակցություն:
- Հաշմանդամների միջազգային օրվա առթիվ հաշմանդամ 100 երեխա ստացել է ձմեռային վերմակ:









- Հիմնանորոգվել են գրադարանային համակարգը, «Մալաթիա» արվեստի դպրոցը, «Սեբաստիա» մշակույթի կենտրոնը և հ.96 մանկապարտեզը:

Հ.174 դպրոցի բակում տեղադրվել են արտաքին լուսավորության հենասյուներ՝լուսատուներով:

Հ.162 դպրոցում բարեկարգվել է բակը, ծաղկապատվել տարածքը, էտվել են ծառերը:

- Ասֆալտապատվել են հ. 176 դպրոցի (300 քմ.) և հ.78 (130 քմ), h.79 (153 քմ.), h.89 (243 քմ.), h. 96 (89 քմ.), h.97 (646 քմ.) մանկապարտեզների բակային տարածքները:
- Հ. 89 մանկապարտեզում փոխվել են կոյուղագծերի ներքին ցանցը, ջեռուցման համակարգի փականները, տեղադրվել է նոր՝ 54 գծմ արտաքին կոյուղագիծ, բարեկարգվել բակը, փոխվել են 6 տաղավարների տանիքները, բակում տեղադրվել է մանկական խաղ:
- Հունիս ամսին վարչական շրջանի բոլոր մանկապարտեզներում անց են կացվել տարեվերջյան ավարտական հանդեսներ, և 1508 երեխայի տրամադրվել է դպրոցական պայուսակ:



















- Կազմակերպվել են մշակութային միջոցառումներ՝ Հայոց բանակի 23-ամյակի, Տեառնընդառաջի, Կանանց միջազգային տոնի, Վերջին զանգի, Երեխաների պաշտպանության օրվա, Առաջին զանգի, «Էրեբունի-Երևան 2797» -ի և Ամանորի առթիվ:
- Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակներում կազմակերպվել է քանդակագործական գիտաժողով. «Մալաթիա» պուրակում տեղադրվել է 7 քանդակ:
- «Հետադարձ հայացք՝ 100 տարի անց» խորագրով անցկացվել են ասմունքի, երգի և նկարչության մրցույթներ:
- «Ֆրանկոֆոնիայի օրեր Հայաստանում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված հայ-ֆրանսիական բարեկամությանը:












Հիշում եմ և պահանջում
I remember and demand













**Վարչական շրջանի թիմերը մասնակցել են.**

- շախմատի օլիմպիադային,
- ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 24-րդ մարզական խաղերին,
- ֆրանսիայի Լիմոժ քաղաքում անցկացված դպրոցականների աշխարհի առաջնությանը,
- ՀՀ նախագահի մրցանակի համար անցկացվող «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթին,
- «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոնին,
- «Կաշվե գնդակ» ֆուտբոլի մրցաշարին,
- ՌԴ Էսենտուկի քաղաքում անցկացված բասկետբոլի միջազգային մրցաշարին:

















